


ՔԱՏԱՆՈՒՄ ԿՐԹՈՒԹԻՒՆ

Պարզաբանի համար
Տարեկան 12 թր.
Վեցամսյան 6
Արտասովորականի համար
Տարեկան 3
Վեցամսյան 1.50 »
ՎՃԱՐՆԵՐԻ ՎՃՐԻՆԻ



Վանդակում տպարանում
հրատարակվող 40 սանթիմ
և յուր վերջին երեսի համար
2) սանթիմ և երեք հինգ
սանթիմ սակարկության համար
2) Ուր գեղջ կրչայ

Պարզաբանի համար ձեռքի
(15 ՍԱՆԹԻՄ)

Նախակ և գրավ դրկել
Խմբագրության հասցեի

R. P. Kalémcarian
Mechitharistangasse W. 4
Vienne
(Autriche)

«Шаржумъ»
Варна.

Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)

Գրութարկի և յնև տրոխր

Արտասովորականի համար ձեռքի
(20 ՍԱՆԹԻՄ)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ ՈՐԵՐԸ

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

ՆԻՍՏ ԺԶ.

Հոգաբարձությունն նկատելով որ Ազգային երկսեռ վարժարանաց հաստիքները կը կազմեն Պատ. Թաղական կործանող կողմանէ արուած նպաստը եւ երկսեռ աշակերտաց ամսաթուղակաները.

Նկատելով որ Պատ. Թաղական կործանողը ամէն ամիս կանոնաւորապէս կը վճարէ Հոգաբարձութեանս իր որոշեալ գումարը.

Նկատելով որ երկսեռ վարժարանք յարատեւ կանոնաւոր ընթացք մը ունենալու համար հարկ է ամէն ամիս պաշտօնէից ամսաթուղակը կանոնաւորապէս վճարել.

Որոշեց.
Որ այն ամէն ծնողք որոնց զաւակները թողական ընդունուած են ի վարժարանս, պարտին իրենց ամսաթուղակը վճարել ամէն ամսոյ մինչեւ հինգերորդ օրը. հակառակ պարագային Հոգաբարձութիւնն պիտի ստիպուի ձեռքի այդ կարգի աշակերտները.

Հետեւաբար մեր այս որոշում կը հարգուի յարգոյ ծնողաց ի գիտութիւն.

Ի զիմաց Հոգաբարձութեան Ազգային երկսեռ վարժարանաց Վ. Ատենադպրի Ատենապետ Գ. Կիւրչիսեան Թ. Մ. Թովմասեան Վառնա, 2 Հոկտեմբեր

ՊԵՏՔ Է ՊԱԿԱՍԸ
ԼՐԱՑՆԵԼ

Վովկասի հայ հրատարակչական ընկերութիւնը այսու գոյութիւն չունի. ուրեմն այսուհետեւ մեր ժողովուրդը զրկուած է միակ հիմնարկութիւնից, որի առաջին և միակ նպատակն էր ժողովրդին ընթացանութեան գրքեր տալ: Այսուհետեւ մենք միայն յոյս պէտք է ունենանք իրանց հեղինակներէ թարգմանիչներէ վրա, որոնք գծախտաբար նիւթապէս անսպասով մարդիկ են և մի քանի տարւայ մէջ հազիւ մի գիրք հրատարակեն, այն էլ շնորհիւ մեկնասաների, որոնք շատ քիչ են հայութեան մէջ:

Մեր ժողովրդի մէջ մենք հիմա ունենք մի ստուար բազմութիւն, որը մեծ ծարաւ ունի ընթերցանութեան, բայց թէ բովանդակութեամբ և թէ գնով մատչելի գրքեր չէ գտնուի: Նա կարող է միայն օրաթերթերը, որոնց մեծ մասը ժողովրդին բացօթուտ չը տալուց, այլու վրաս է հասցնում: Ուրեմն եւս առաւել պահանջ է զգացվում հրատարակչական գործը պարզացնել:

Եւ այդ գործը աշոյ կերպով կարելի է առաջ տանել միայն արտասահմանի մէջ, ուր մամուլային օրէնքը ամեն ազատութիւն տալիս է ձեռնարկողներին: Անհրաժեշտ է արտասահմանում ստեղծել ժողովրդական գրքերի հրատարակչական մի ընկերութիւն: Երանի թէ ձեռնհաս մարդիկ շտապէին եւրոպական կենտրոններից մէկում հիմնել այդպիսի մի ընկերութիւն:

Մենք տեսնում ենք թէ ինչ ճիգեր են թափվում արտասահմանի մէջ պահպանել զանազան անպէտք օրաթերթեր և ամսագրեր, որոնց մեծ մասը միայն վրաս են հասցնում միամիտ ընթերցողներին: Ահլի լաւ կը լինէր այսուհետեւ փոխանակ այդ անսակմամուլի պահպանութեանը աշակցելու ճիգ թափվէր ընտրովի գրքերի հրատարակութեան գործին զարկ տալ: Գուցէ այդպիսով կարելի լինէր և շեղօքացնել ազտօտ մամուլի ազդեցութիւնը:

Մենք շատ մեծ կարեւորութիւն տալով ժողովրդական ընթերցանութեան գործին, վճռել ենք նոր տարուց սկսած «Շարժում» մի շարք ժողովրդական գրքեր

հրատարակել. այդ գործի յաջողութիւնը կախված պէտք է լինի մասամբ հայ հասարակութեան նիւթապէս և ապա մտաւորապէս կարող երիտասարդութեան բարոյական աշակցութիւնից:

Այժմանից հրաւէր ենք կարգում մեզ ուղարկել ընտիր ինքնուրոյն և թարգմանական ժողովրդեան մատչելի բովանդակութեամբ գիտական, պատմական և գեղարեստական փոքրիկ գրաւածքներ. եթէ հասարակութիւնը մեզ այնքան քաջալերեց որ հրատարակութիւնների ծախքից յետոյ և արգիւնք մնաց, այն ժամանակ բաժին կը տրուի նիւթերը մատակարարող հեղինակներին:

ՎԱՐՊՈ

ՆԱՄԱԿ ԿՈՎԿԱՍԻՑ

Անշուշտ իմացած կը լինէք որ հայոց հրատարակչական ընկերութիւնն էլ փակվեց: Այդ միակ հայ հրատարակչական ընկերութիւնն էր որ ժողովուրդին ընթերցանութեան գրքեր էր մատակարարում և հայալքատ գրա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏԱՍԻՆՆԱՏՈՒՆԵՐԸ
ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻՆ ՄԷՋ

Երբ մեր վարժարաններու անկերպարան վիճակին վրայ կը խօսինք ու կը գրենք ցաւ յայտնելով, միայն ուսուցիչը պատասխանատու չի բերուինք, ու իր անկարողութեան կամ ապիկարութեան չի վերագրենք լոկ անոնց ողորմելի վիճակը: Ուսուցիչին կամքէն բոլորովին անկախ, եւ նոյն իսկ անոր էպպէս հակառակ հաղարուածէկ արգելքներ կան, որոնց հանդէպ ամէն բարեացակամութիւն կը խորտակուի եւ ամէն զոհողութիւն ապարդիւն կը մնայ:

Միշտ օգտակար է խնդիր մը երկու կողմէն ալ քննել, եւ ուր է պակասութիւն մը այն ատեն միայն

խոկապէս հասկցուած կրնանք նկատել, երբ զայն քննած ենք իր բոլոր երեւոյթներուն տակ: Միակողմանի քննադատութիւնը միշտ ամուլ կը մնայ, եթէ ոչ վնասակար: Ու ժողովուրդը, աղբային պաշտօնական մարմինները որքան խստապահանջ կըլլան դէպի ուսուցիչը, նոյնքան խստապահանջութիւն պէտք է յոյց տան ինքզինքնուն հանդէպ եւ իրենց կողմէ ամէն ճիգ պէտք է թափեն կատարելու համար այն բոլոր պարտաւորութիւնները զորս իրենց յօժար կամքովը ստանձնած են:

Պէտք է միանգամ ընդմիշտ համոզուիլ որ մեր վարժարաններու հակառակ ամէն զոհողութեան, ունեցած յաւիտեանական ամուլութիւնը իրեն պատճառ ունի առ հասարակ ուսուցիչին թերութիւններէն շատ աւելի անմիջական արգելքներ, որոնք ժողովրդին դէպի կրթական գործը ունեցած անհասկցողութեան կը ծնին, եւ որոնց դէմ ինք առանձին անկարող է մաքառելու: Ու որ-

քան ատեն մենք անկարող ըլլանք, կրթական գործը հաստատ հիմնրու վրայ գնել, ընդհանուր ծրագիր մը, հաստատ պիտուէ մը, առ հասարակ ընդունուած ընդհանուր մէթոտ մը ընդկրկել, եւ զայն անխտիր գործածել գէթ արտասահմանի վարժարաններու մէջ, միշտ մեր զպրոցական գործերը պիտի կազան, միշտ արգիւնքները պիտի վիժին ու, ջանքերը, զոհողութիւնները պիտի յապաղին համեմատական արգիւնք մը ցուցնելու:

Հոս գիտաւորութիւն ունիմ նշմարել ապլ միմիայն ամենակարեւոր այն թերութիւնները որոնք ուսուցիչին կամքէն գրեթէ բոլորովին անկախօրէն կը գործուին եւ որոնք մեծապէս կը վնասեն կրթական գործին:

Ուսուցիչ մը տարուան մը շրջանին մէջ օգտակարութիւն մը և արգիւնք

մը յառաջ բերել կարենալու համար, տարեկան դասախօսութիւններուն սկսելէն գէթ մէկ ամիս առաջ պէտք է գիտնայ որո՞ւ եւ ի՞նչ դաս տալը: Ասիկա անկարեւոր մանրամասնութիւն մը չէ: Ով որ ուսուցչութեան ասպարէզը մօտէն ճանչցած է, գիւրաւ պիտի հասկնայ թէ սճապարանքով, զպրոցը բացուելուն մէկ քանի օր մնացած պաշտօնի կոչուող ուսուցիչները որքան զժուարութիւն կը քաշեն, մինչեւ որ նոր պայմաններուն կընտելանան, նոր միջավայրը, նոր պէտքերը, աշակերտները, անոնց վարք ու բարքը կը ճանչնան: Արդէն տարին կը սահի, եւ ուսուցիչը սորվեցնելէ աւելի աշակերտներուն նկարագրը, բարքերը, թերութիւններն ու առաւելութիւնները հազիւ կը յաջողի բժշկելու: Յաջորդ շրջանին է որ, այլ եւս տէր դարձած իր աշակերտներուն հոգեկան լարերուն, պիտի կարողանայ իսկապէս տղուն օգտակար ըլլալ: Ու ահա, հրաժարեցումը կուգայ:

գէտներին միջոց տալիս իրենց հեղինակութիւնները լոյս ընծայել: Կառավարութեանը էր կամայ կամայ վերջին տարիներս բաւական ծաղկած վիճակի էր հասել: Այդ ընկերութիւնը աւելի մեծ թափանցանքներ անելու և իր գործունէութիւնը աւելի լայնացնելու վրա էր և ահա Ռուս կառավարութիւնը իր արջի թաթով դրա գլխին էլ զարկեց ու ճզմեց...

Հայ հասարակութիւնը դեռ այդ թարմ և ուժգին հարուածից ուղի չեկած, յանկարծ Ռուսական թերթերում մէջ տեղ եկաւ և լուսաւորութեան նախարարի բացատրութիւնը հայոց հոգեւոր միջնակարգ դպրոցներին և ճեմարաններին մասին: Այդ «բացատրութեամբ» հայ բարձրագոյն հոգեւոր դպրոցներ աւարտածները զրկվում են բոլոր այն իրաւունքներից, որ մինչեւ օրս վայելում էին զինւորագրութեան և պետական ուրիշ ծառայութիւններին մէջ. բացի դրանից զրկվում են և հայ ծխական դպրոցներում ուսուցչութիւն անելու իրաւունքից:

Սրանով պարզ երևում է թէ Ռուս կառավարութիւնը բոլորովին լիբր չը նկատվելու համար բարձր դպրոցներն էլ ծխական դպրոցներին պէս բոլորովին չը խլեց. այլ զրկեց իրաւունքներից, որ իրանք իրանց ոչնչանան: Բացի դրանից Ռուս կառավարութիւնը այդ հարուածով մի ուրիշ նպատակի էլ է հասնում. հայ ծխական դպրոցները զրկվում են հայկական կրթութիւն ստացած ուսուցիչներից, որոնց տեղերը պէտք է բռնեն Ռուս կրթութիւն ստացածները—նոյնիսկ օտարները, ինչպէս հիմա մի քանի դպրոցներում արդէն օտար և հայերէն ոչ մի բառ չի հասկացող ուսուցիչներ կան:

Հիմա մնում է եկեղեցին, Տեսնենք հիւսիսային արջը այդ

հիմնարկութիւնը երբ պէտք է հարուածէ: Ստորերկրեայ խորտակիչ ճիգերը արդէն թափում են. հայ հասարակութեան համար անսպասելի չի լինի. եթէ Խորհրդանի մահից յետոյ կաթողիկոսի ընտրութեան ձեւը փոփոխվի և էջմիածնի կաթողիկոսները իրենց շատ իրաւունքներից զրկվեն:

Կարճ, կիսաբանի ուսուցման գործը հսկայական քայլերով առաջ է գնում. տեսնենք երբ աւելի սուր կերպարանք կ'ուսնայ: Հիմա Ռուսաստանի մէջ հաւատար չափով մտարկվում են ֆինլանտացիք, և մենք հայերու մէջը հիւսիսում միւսը հարուում...

Լեհացիներին հալածանքը մի քիչ մեղմացել էր, բայց վերջին դաւադրութիւնը զուգէ պա ճառ լինի նոր խտտութիւնների:

ՓՈՒՇ

ՎԵՐՋԻՆ ՊՈՍՏՈՒԱՆ ՄԵ

(Շար. 260 քիւիւն և վերջ)

4. Ես կարող եմ հաստատել թէ իմ ակնարկած իսկական Սլանը «հաց մուրալու համար» գաղափարէ գաղափար և կուսակցութեան կուսակցութիւն թափառելու սովորութիւնը ունեցած է. պարտաւոր է ինքն ալ մերը հաստատել. եթէ մեր Գաղափարացիները «հաց մուրալու համար» ցոյց տալ կը ջանայ, կը ցաւիմ իր վրայ. այդ պարագան Միտրոքանի մէջ հրապարակելու քաջութիւնը ունեցած եմ արդէն. եթէ «հաց մուրալու համար» յեղափոխական դառնալ ուզէի, աւելի մեծ իրաւամբ պէտք է Մայի նազարեկի զեկավարած «հայկական կուսակցութեան» մէջ. այս պարագան նոյնիսկ կարող եմ հաստատել իմ թշնամիներու (ոչանձնական) Ա. Արփիարի, Տիրան Բէլեկեանի վկայութեամբ. Ես «հաց մուրալու» կուսակցութեան անունը շահագործելու (Սլանի նման) համար յեղափոխական չեմ եղած, անկախ արհեստի շնորհիւ հաց կարող եմ ճարել, Սլանի պէս ուրիշներէ կախում չուն

նիմ: Ես կատարեալ գիտակցութեամբ եւ համոզումով յեղափոխական եղած եմ. փոխանակ հաց մուրալու, նիւթապէս նպատակ եմ յեղափոխական Ս. գործին, այս մասին կարող են վկայել իմ գործած վայրերու յեղափոխականները, Տիվրիկցիք, Ակնեցիք, Շապին-Խարահիսարցիք, Սեբաստացիք, Երզնկացիք, Արմատացիք, Լճեցիք, Ջմառացիք. թարիզ գտնուող կամ հեռացող Արմենականները, Գաղափարականները եւ նոյն իսկ Հայկականները:

5. Մեռնող Ա. օր մասին գրածներու մէջ կէտը ես չեմ տեսնու. այդ մասին կեղծական պիտոն գրաւոր ապացոյց մը ունի. նոյնիսկ Ա. օրն ձեռագրով: Մենք Ա. օր անցեալի մասին չենք խօսած, եթէ Սլանները գործիչներու անցեալը նկատի ունենալով ներկային կարեւորութիւն չեն տար, մենք այդ իրացուական արամբանութեան բռնիք չունինք. թո՛ղ թիւթիւն ճիշտնորոշ. Մամբրէներու համար ես հոգիհանգիստներ կատարել տա՛ն... թո՛ղ ուզածնուն չափ անարգեն հաւատարիմ եւ ճշմարիտ գործիչներու յիշատակը...

6. Ես ջանք չեմ րած կողմնակի եւ քողարկուած խօսքերով Սլանը մասնել. եթէ Սլանի նկատմամբ անմեղունակ ակնարկութիւնս մասնութիւն համարուի, որ ոչ մի փաստ չը ներկայացնէր, ապա ուրեմն, ես ինքզինքս ալ մասնած կը լինիմ նոյնիսկ հասցէս առաջով. եւ մատնուած նոյնիսկ երիտասարդ (՝) Սլանի վերջին ակնարկութիւններով... Եթէ Սլանի է այդ թո՛ղ զէնքը...

7. Աւելի կարուկ կը լինէր եթէ Սլան ինքը թուէր Սալմաստի թրքական անցեալ վիճակը ուսուցիչներով միասին. այդ բաղդատութիւնը իրեն պատասխան կը լինէր:

8. «Յայտնի գոյնի հայ թշնամիներ» խօսքը բնաւ չի վերաբերի արմենականներու, աղաներու, մատնիչներու եւ գաղափարութեան վնասողներու. երբ Սլան «յայտնի գոյնի հայ թշնամիներ» խօսքով կորակէ ոճրագործները, ապա ուրեմն իրեն «յայտնի» պիտի լինէին յայտնի գոյնի մարդիկ եւ հետեւաբար համարձակ պիտի տար անոնց անունը, անշուշտ «յայտնի գոյնի» խօսքը իր մասնաւոր իմաստը, ւնենալու էր եւ անոր ոյժը ու նշանակութիւնը գիտնալու իր հայերէն կարգացած բաւականաչափ հակացող Սլան: Բայց ի՞նչ հարկ կայ հեռուները երթալ,

արդէն Սլան այս անգամ համարձակ խոստովանած է «յայտնի գոյնի հայ թշնամիներուն» ո՞վ լինելը. նոյնպէս Ա. օր ընկերը Մուրալու գրած էր բացարձակապէս Գաղափարականներ ըլլալնին: Ուրեմն, մենք իրաւունք ունէինք վարագոյրը բաց ընելու:

Ընթերցողները պէտք է գիտնան որ սեղիս Հնչակեան եւ Գաղափարական կուսակցութեանց մէջ կուսակցական հակառակութիւն գոյութիւն չունի, (թէեւ Սլան կը ջանայ ստեղծել իր հայտնող բերանով). այլ միայն քառուսնոց Սլանի հասարակական վնասակար եւ ստոր գործունէութեան զէմ է հակառակութիւնը, անոր անհատական գոյութիւնը ոչ մի նշանակութիւն չունի:

9. Գաղափարական հին խնդիր մը մէջ կը բերէ իբր փաստ, մինչդեռ այդ խնդիրը Սրբազանի հետ բնաւ կապ չունի. որովհետեւ քողաքող տեսուչը (՝) իր անիրաւ պահանջը հիւպատոսարանի միջոցաւ ստանալ կը յուսար, առաջնորդին առջարկը մերժելով զիմած էր ուսուց քօնաւելին, որուն հետեւանքը բնականաբար այն պիտի լինէր. ինչ որ արդէն եղաւ. ուրիշ ելք չը կար: Այս մասին Շարժումի ընթերցողները կարող են զիմով Միտրոքի գրածներուն, անշուշտ մոռցած չեն «Հայ-Տրէյֆիւս եւ Հայ-Ջօլա» խնդիրը:

Սլան բնական բերումով փաստաբան կը կանգնի աղարատածներուն, այդ իր բնածին պայտօնն է:

10. Պարսից արտաքին գործոց պաշտօնատեսնը Այվաթեան Սրբազանի բոլոր պաշտօնական գրու թիւնները յետ չէ ուղարկած. Սլան թո՛ղ յիշէ միայն մէկը, անշուշտ զէպքը առանց յեղաշրջելու:

11. Ուշիկ վարդապետ Գաղափարի ձեռնարկած դպրոցի հիմնարկութիւնը կառավարութեան կողմէ արգելուելուն պատճառը, վարդապետին ինքնազուրի գործելն է. Սալմաստի յանձնաժողովը նոյնիսկ մերժեց վճարել այդ առթիւ եղած ծախքերը, եւ Այվաթեան Սրբազան մի կերպով համոզեց յանձնաժողովը եւ հաշիւը կարգադրեց:

12. Աղաջանի խնդիրը բարձրիկն սուտ նկարագրուած է. Պարսկաստանի մէջ Ֆարաշը երբէք չը համարձակի ծեծել սարվազը (զիտուոր), առաջնորդարանի գավազները սարվազներ եղած են միշտ:

13. Վարդան Բահանայի խնդրոյն մէջ Սրբազանը իբր ճարպիկ եւ խե-

յամահճոյք մը, կողմնակի հակակրութիւն մը պատճառ կըլլայ ուսուցչին հեռացման ու անոր հետ կը կորսուին բոլոր մէկ տարուան աշխատութիւնները, զոհողութիւնները, քանի որ նորեկ պաշտօնեան դարձեալ պիտի վերագառնայ առջի քայլին, ինքն ալ իր կարգին պիտի քննէ, պիտի ճանչնայ աշակերտները, որպէս զի յետոյ ալ օգտակար ըլլայ: Մեր հոգաբարձուները որոնք ամէն առթիւ պիտեմէ խնայողութիւններ կը ցանկան ընել, եւ ատոր համար միակ միջոց գտած են ցարդ ուսուցիչներու ամսականներէն յապաւել, ապահովարար մեծագոյն խնայողութիւնը պիտի ըրած ըլլային, եթէ ուսուցչական խումբ մը գէթ ծրագրական ամբողջ շրջան մը շարունակաբար պահէին, որով երբեք չի պիտի հարկ տեսնուին այն նախնական քննութիւններուն, ծրագրի պատրաստութեան, կարգերու կազմութեան համար կատարուած աշխատութիւններուն, որոնք առ նուազն դպրոցական սարքէն մէկ

ամիս կը իլին. եւ աշակերտներուն ալ թերեւս տարի մը առժեղու պատճառ կըլլան. նոր ծրագիրը կը տեսնես որ հինին չի համապատասխաներ եւ աշակերտ մը որ երկու տարիէն իր շրջանը պիտի աւարտէր ըստ հին ծրագրին, կը ստիպուի նոր ծրագրին այրինչ կամ այնինչ պահանջք լրացնելու. համար տարի մը ետ մնալ նոյն կարգին մէջ, Արդի պայմաններով դպրոցական ծախքերը որքան ալ խնայողական ընել ուզուին, դարձեալ խիստ շատ են բաղդատարար, քանի որ որոշ արդիւնքի մը չեն յանգիր, եւ իւրաքանչիւր տարուան արդիւնքը յաջորդին հարուածը կրելու դատապարտուելով՝ զիրար կը չեղոքացնեն: Ու այդ անպատեհութեանց ոչ մէկին համար ուսուցիչը պատասխանատու չէ:

Ուսուցչին համար երկրորդ դժուարութիւն մը եւ ժամանակի անտեղի կորուստ մը կառթէ նաեւ դատադրութիւն խնդիրը. Հազիւ թէ կարգերը կը կանոնաւորուին, ծրագիրը կը պատ-

րաստուի, հիմակ ալ պէտք է սպասել գիրքերը գալուն: Եթէ ուսուցիչները փոխուած չըլլան շարունակ երբեք այս անպատեհութիւնը տեղի չունենար, որովհետեւ նոյնող շրջանէն աշակերտներուն կարողութիւնը իրենց ծանօթ ըլլալուն, ժամանակին պիտի բերել տան այն ամէն գրքերը՝ որոնք անհրաժեշտ պիտի դառնան նոր շրջանի համար: Այսպէս, սկզբնական կարգապարտութեանց համար զոհուած ամիսէն ետք, նոր ամիս մըն ալ հարկ կըլլայ զոհել, սպասելով դատադրութեան գալուն, Հոս ալ ուսուցիչը ու եւ է պատասխանատուութիւնէ զերծ է. քանի որ ինք պաշտօնի կանչուած է հազիւ դպրոցը բացուելուն 2—3 օր մնացած, ու պիտի սկսի նոր շրջանակի մը մէջ դասախօսել, որուն տարրերը իրեն անծանօթ են, կանխաւ կարգապարտութիւն մը ընել յաջողուելու համար:

Եւ մտածել պէտք է որ, յաճախ դպրագրքի չդրուութիւնը կը ստիպէ,

ուսուցիչը գրել տալ, այսինքն դատադրք մը պատրաստել կամ դատերու յատկացուած ժամանակը խլելով, կամ աշակերտի պարտաւոր ժամերը աւելորդ աշխատութեամբ մը բեռնաւորելով, եւ ամբողջ տարուան ընթացքին մէջ, լոկ դասագիրքը գրելու համար կորսուած ժամանակը ահագին կորուստ մըն է, զրկանք մը ուսանողին համար, զոր ոչ մէկ բանով կարելի է բուժել: Ու այնուհետեւ, հարկաւ գործը պէտք է կաղայ, հարկաւ աշակերտները ետ պիտի մնան, եւ տարեկան արդիւնքը չի պիտի համապատասխանէ ծրագրին տրամադրութեանց:

Պէտք է նկատել որ, մեր ծրագիրները, որքան ալ ճարպիկորէն ու ձեռնհասութեամբ պատրաստուած ըլլան, անհրաժեշտօրէն աւելի շատ ծանրաբեռուած են, քան եւրոպական ու եւ ծրագիրը, որուն հետեւեղողութեամբ պատրաստուած է մերը. նախ որովհետեւ մենք ստիպուած ենք բացի մեր մայրենի լեզուէն,

լացի մէկը գործած է եւ յաջողած է տաճկաց փոխ-հիւպատոսը պատժոյ ենթարկել -- ներդրութիւն խնդրել տալ--

Չը գիտեմ, հակառակորդս արդեօք տեղեկութիւն ունի՞ր այս դէպքէն, որ համարձակ հակառակը ցոյց տալ կուզէ կատարեալ անարիւրեղութեամբ:

14. Ալլախալիքներուն պարսկ դատարանի մէջ ծեծուիլը տարրին նակ երեւոյթ մը չէ, նոյնիսկ Սաուդալաղի մէջ դատարար հակառակ օսմ. հիւպատոսարանի բողոքին տաճկահպատակ պարսկ մը բանտարկել եւ ծեծել տուած է. Արդեօք Սըլան եթէ ինքը արաջնորդ լինէր կարող էր պարսկ ընթերցարանները...

15. Ռուսագաւառութեան խնդրին պատասխանը Սըլան կարող է գտնել առաջնորդարանի եւ հիւպատոսարանի լարուած դրութեան պատճառներուն մէջ. Այս մասին Շարժումի մէջ արդէն գրուած է:

15. Առաջնորդին՝ Սալմաստէն վերադարձին հայ ժողովրդեան կողմէ եղած ընդունելութեան մասին մեր գրածին վրայ կը պնդենք եւ կը յայտարարենք որ Սըլան այս մասին եւս ստախոս մըն է:

Վերջնական առաջարկ՝ Ես այս բոլոր գրածներուս պատասխանատուութիւնը ընդունելով պատրաստ եմ հաստատելու վկաներով, փաստերով, տօքիւմաներով եւ իրողութիւններով: Հետեւաբար 25-նոց կամ 40-նոց Սըլաններուն կառավարկեմ այստեղ կազմել 4 հոգիէ բաղկացած ատեան մը, որ մեր երկուքին փաստերը մտիկ ընելով իր վճիռը կայացնէ եւ այդ վճիռը հրատարակել տայ Հնչակի եւ Շարժումի մէջ: Ես ընտրած եմ իմ երկու փոխանորդներս, թող ինքն ալ ընտրել իր երկու փոխանորդները: Այս առեանին մասին որ եւ է առարկութիւն չի կրնար ունենալ, քանի որ Շէկոյի խնդրին մէջ աւելի համարձակ կերպով գործուած է, մինչդեռ մեր առաջարկած ատեանը ահմանափակ եւ թագուն պիտի լինի:

Եթէ վատաբար փախուստ տայ Սըլան, արդէն ինքնին պայտուցած պիտի ըլլայ գրածներուս ճշմարտութիւնը: Եւ ես այդպիսի վատերուն երեսին թքնելէ ուրիշ միջոց չունիմ,

ինձ պիտի ընկերանան անշուշտ Հնչակի ընթերցողները եւ նոյնը թերեւս Հնչակի խմբագրութիւնը պիտի կատարէ:

ԹԱՓԱՌԻԿ

Թաւրէզ

ՆԱՍՏԱԿ ՏԻՊՈՒՆԱԿԵՐՏԷՆ

Նախորդ նամակովս արդէն գրած էի արեւուտրի դագրբիւր, նաեւ թղթավաճառ Սարգիսի ինքզինքը թունաւորելը: Այն օրէն ի վեր ես ալ պարապ ըլլալու հոս ու հոն գեղեցիկով գործ մը գտնել կը ջանայի, որպէս զի գէթ օրտպահիկս հայթաթեմ, բայց, անօգուտ:

Ապրիլ 5ին մեզ այցելող մտերիմ բարեկամներով նշած էինք տունը, սրտի նեղութենէն չէինք զիտեր ինչ ընելին: Մենէ մէկը Ս. Գիրք սկսաւ քաղել, որովհետեւ «յեզափոխիչ» գրքեր կարգաւր անկարելի է. զուրկ ենք ատոնցմէ, անոնք կը փախն գետնի տակը: Արդեօք ե՞րբ լոյս մը պիտի ծագի հայոց ազգին ու այն ատեն պիտի կարողանանք արձակ համարձակ կարգաւ «Բաֆֆին», «Անգլիական նամակներ», «Սիսուանը», «Շահէնի Սիպիրը», «Մերենցը» և ուրիշ շատ մը գրքեր զորս գեռ ոչ տեսած ունինք և ոչ ալ լսած:

Յետոյ, առաջնորդարան, Եզեկիէ վարդապետին քով գացինք որպէս զի բացատրութիւններ ուզենք Ս. գրքին ինչ ինչ կէտերուն վրայ:

Երբ առաջնորդարանի գռան մտեցանք մեր աչքերուն առաջին զարնուողը եղաւ Հաճին ճանցի հսկայ կայտառ դէմքով, կայտոյ՞ աչքերով գիւղացի մը որ խոշոր թուղթ մը Հաստափոր Մայրագոյն Եզեկիէ վարդապետին ձեռքը կուտար: Այդ գիւղացին մեր աչքերուն ծանօթ մէկը կերեւէր:

Զգուշանալով անոր խորաթա-

փանց աչքերէն հեռացանք, կամացուկ մը ծաղկոցը մտանք ուր տղաքները իրենց դասերը կաւարտէին: Խեղճ տղաք մէկէն ներս մտնելնիս տեսնելուն պէս՝ խրաջեցան, որով ստիպուեցանք դուրս ելլել. անպատեհութեան մը տեղի չի տալու համար: Նոյն պահուն տեսանք Հաստափոր Եզեկիէլը որ ձեռքի թուղթի կտուրը նետեց, պոռալով, բարձր ձայնով մը ըսելով, «Կէթ պաշտընըլը եսէն, պէն սիղէն զաղվանըլը տէնլիսաճալըմ», խեղճ գիւղացին ախուր դէմքով մը երեսը խաչակնքեց և արտասուալից աչքերով դուրս եկաւ առաջնորդարանէն: Բարեպաշտ գիւղացիին խաչակնքը շինծու խաչ հանելու չէր նմաներ. անիկա հայու խաչ էր և խոշոր, ատոր վտահելով մօտեցայ և հարցուցի իրեն. Խեղճը հայերէն անգամ չէր կրնար խօսիլ թէ հայ էր:

Պատասխանեց «Լալայ, ամ ֆլայէ» (տղայ ես հայ եմ) այսպէսով մի քիչ մանր խօսակցութիւններէ վերջ՝ հրաւիրեցի զինքը տուն և գիշերն ալ մնայ. Գիշերուայ մինչեւ ժամը վեցին չի կրցանք բան մը հասկնալ իրմէն: Ամէն ինչ ուրացաւ նոյնիսկ Հաստափոր Եզեկիէլի տուած կտոր թղթի ինչ ըլլալը, կասկածելով թէ մենք տաճիկներ ենք, կուզենք խաբնօք բերնէն բան առնուլ:

Գիշերուայ ժամը 8ին խոր լուութիւնը աիրած էր. ամէն ոք քնացած վիճակի մէջ էր, միայն ես և Պ. Շամիրամ անքուն կը խորհէինք շարաշար կերպով թէ Հաստափոր Եզեկիէլին յանձնուած կտոր թուղթը ի՞նչ ըլլալու էր: Վերջապէս բանի մը չի կրցանք նմանցնել, բացի ազնուագրէ մը, և այսպէս ալ եղաւ մեր վերջնական համոզումը: Յանկարծ խեղդուկ ձայնով մը սկսաւ բացականչել գիւղացին իր

երազին մէջ, «Լալա՞նդ պըլըր, լէխա՞յ, պըգո՞ւժ, զո՞ւ, լէխայ լալո լէխայ» (Լեւո՞ն բռնէ, զարկ, սպաննէ, իսխա՞ւ, զարկ տղայ զարկ): Այս անախորժ ձայնէն ամենքս ալ արթնցած ստիպուեցանք զինքն ալ արթնցնել, վախնալով թէ թուրք գրացիները լուր տան կառավարութեան ըսելով, կեա՛վուրները քիւրտ մը բերած կը խեղդեն... միթէ հեռու է անօրէններէն այսպիսի բան մը ընելը... ո՛չ: Հայ գիւղացին համոզուեցաւ հայ ըլլալնիս, սկսաւ մէկիկ մէկիկ պատմել թէ, ինչ շարաշարանքներ կրած են և քանի օր անընդհատ կուր մղած են թուրք և քիւրտ աշայիրներու գէմ: Նախ խօստուանեցաւ Եզեկիէլի տուած թուղթը ինչ ըլլալը, (ինչ որ մենք գուշակած էինք) որով հաճի ճանցիները օգնութիւն խնդրած են Հաստափոր Եզեկիէլի միջնորդութեամբ: Կառավարութեան միջոցաւ գաղթեցնել տայ այդ ահուկի և ըսքանչելի կուրը, բայց... ի ի զուր, անլսելի և անպատասխանի մնային հաճի ճանցիները մինչ ցարդ:

Հայ գիւղացիի առաջին խօսքը սա եղաւ թէ «Ես երբէք տարբերութիւն մը չեմ տեսներ 1895 հոկտ. 20 (կոտորածի) օրը և 1900 ապրիլ 4 ի օրը, որովհետեւ միեւնոյն դառն օրերն էր. ա՛յս է վայրագ Սուլթանի հաչակած անդորրութիւն և ապահովութիւնը...»

(Շարունակելի)

ՆՈՐ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ
Թ. Կ. ՊՕՆՃՈՒՔԵԱՆԻ
Ա. Տարի 60 ասնթիւ, Բ. Տարի 1 Ֆրանք, Գ. Տարի 1 Ֆրանք:
Գոնէ 20 օրինակ գնողներու համար 15 0/0 զեղչ:
Վճարումները կանխիկ:
Յանձնարարութեանց համար դիմել յօրինողին սա հասցէով
Թ. Կ. ՊՕՆՃՈՒՔԵԱՆ
(Պուլկարիա) Վառնա
---)(---

մեր նախակրթարաններու մէջ, ուրիշ մէկ երկու օտար լեզուներ ալ աւանդել, որոնք անուագն ամսական 24 ժամ կը խլին իւրաքանչիւր աշակերտին պարապմունքի սպաս ժամերէն: Ասկէ զատ մեր նախնական վարժարանները պէտք է միանգամայն կատարեն մասամբ երկրորդական վարժարաններու զերը, քանի որ անոնք կը պակսին մեզի սովորաբար, եւ աշակերտները արդէն նախակրթարանին մէջ, մտած առեանին օրինական տարիքը շատ անցած կըլլան, այնպէս որ դասընթացքը սարսիւղ ետքը, եթէ երկրորդական ուսմանց հետեւիլ ուզեն, պէտք է մինչեւ 25 տարեկան զբաղին ժիմնապններու մէջ: Նախակրթարանը աւարտող սղոյ մը առ առաւելոյ 14ը պէտք չէ անցնի մինչդեռ մեր մէջ 17 տարեկանէ վար զօտար է ընթացաւարտի հանդիպիլ:

Ու եթէ այս բոլոր անպատեհութեանց վրայ--որոնց մէջ ուսուցիչը մազի չափ պատասխանատուութիւն

չունի--աւելցնեն, ուսուցչին անձնական հոգեբը, իր անստոյգ ու անապահով վիճակը, հոս ու հոն, անկիւններու մէջ իրեն զէմ գաղտագողի լարուած մեքենայութիւնները որոնք մեր վարժարաններու շուրջը վիտաքող համայնակեծ ու աւերիչ որդիք կը կազմեն, -- երբ խորհիք թէ իր վարձը ստանալու համար ստիպուած է հազար դուռ զարնել, աղաներուն քմահաճ ձգըձգումներուն ակամայ տեղի տալ ու միանգամայն խօսք հասկցնել իր կոտ պարտաւէրներուն, որոնք անխնայ իր ետեւէն կիշնան յաճախ ամենէն անխիղճ յպատեանալիքներով, -- այն ատեն պիտի համոզուինք որ, ուսուցիչը այդ վճարակցութիւնը գրութեան մէջ միշտ արդէն տարօրինակ սովորութեան եւ յարատեւ աշխատութեան տիպար մը ներկայացած է, եւ եթէ արդիւնքը յաճախ անշուն է, պատճառը ուսուցչին կամքէն ու կարողութենէն բոլորովին դուրս ի-

րողութեանց մէջ պէտք է փընտառիլ:
Իրաւ է թէ անկարող անպատրաստ, իրենց պաշտօնին անգիտակից ուսուցիչներ ալ շատ կան, որոնք ինչ պայմաններու մէջ ալ գտնուին, ու խտած են վնասակար դասնալ: Բայց միշտ մենք մեղի դէմ խստապահանջ ըլլալու ենք նախ, որպէս զի յետոյ իրաւունք ունենանք որիչներու զէմ նոյնքան ու աւելի խստապահանջ ըլլալ: Անփութութիւնը, ապիկարութիւնը շատ անգամ երկուստէք է, եւ երկուստէք զատապարտուելու իրաւունք ունինք: Ուսուցչական ասպարէզը, մեր մէջ, ոչ մէկ սեռակէտով քաջալիրական ասպարէզ մը չէ, ու հոն նետուողները (հինէն միացածները եւ պատահական բացառութիւնները զանց առնելով) կատարելագոյն գաղափարական, իրենց պաշտօնին սիրահար մարդիկ են, որոնք եթէ ուզատ ու անկազկանգ ձգուին իրենց գործին մէջ եւ սա ու ան քմահաճոյքի կամ հոսանք

քի զո՞ երթալու վախը չունենան, ամենալաւ արդիւնքը կրնան տալ պղծիւն: Բայց ամէնքուս յայտնի է թէ ի՞նչ պայմաններով կը պաշտօնավարէ ուսուցիչ մը, եւ այդ պայմաններու մէջ է որ մենք ուսուցիչներէն կը պահանջենք 8-9 ամուսն միջոցին, աշակերտներու մէջ ընտանիքէն կամ միջավայրէն տարիներու ընթացքին մէջ փոխանցուած վնասակար սովորութիւններն ու մոլուրութիւնները ջնջել. ընդարմացած միտքերը արթնցնել եւ հմտութեան պաշար մը ցոյց տալ անոր մէջ: Ու երբ չեն յաջողիր, առանց երկար բարակի, փոփոխութիւն մը կը կատարեն ու ամէն բան կը վերջանայ նոր յոյսերով, որոնք միեւնոյն պատրանքներուն դատապարտուած են:

ԼԵՒՈՆ ՍՍԻՐՍԵԱՆ

---)(---

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Աքիոն Գարա-Հիւսարի մէջ բարեւէր կին մը Տիկ. Աննա, մեռնելով իր ժառանգութեան մէկ երրորդը, մօտ 400 սկի կտակ թողած է ազգային վարժարաններուն: Նոյն քաղաքէն երկու ուրիշ սնձեր ալ հոգարարութեան արամադրութեան տակ են գրած 50 սկիի պումար մը, տեղւոյն մանկապարտէզին պէտքերը հայթայթելու համար: Աւրիշներ ալ տրամադիր են եղեր նմանօրինակ նպատակներ ընելու:

Արտասահմանի հայ ազաները օրինակ թող առնեն երկրին մէկ անկիւնը, բռնութեան գաւազանին տակ կատարուող այսինքնակամ բարեգործութիւններէն: Անթիլ չէ՞ մեզի երբ ամէն տարի մեր վարժարաններուն պիտոճէնները սեղմելու ճիգեր կատարուինք ընել շարունակ, փոխանակ նոր ազգային ստեղծելու և հինը ընդլայնեցնելու:

Մանթ գրագէտ Եղիա Տէմիրճիպաշեանի ջգային հիւանդութիւնը վերջերս կրկին սաստկացած ըլլալով, գարմանուելու համար Ազգ. հիւանդանոց տարուեր է, ուր առանձին սենեակի մը մէջ, հոգաբարձութեան մասնաւոր խնամքներուն և բժշկական մարմնոյն բացառիկ հոգատարութեան շնորհիւ հետզհետէ ապաքինիլ սկսած է:

Մանթ մանկավարժուհի, Տիկ. Մատակեան հոկտ. 11ին ուսական հիւանդանոցին մէջ մեռեր է: Յուզարկաւորութեան հանդէսը կատարուեր է Բերայի եկեղեցիին մէջ, Պատրիարքին նախագահութեամբ և իր աշակերտներուն ներկայութեամբ: Դամբանականներ խօսուեր են իր գործունէութիւնը գրուածով:

Տիկ. Մատակեան մեր կրթական գործին մէջ կարեւոր նորութիւն մը մտցուց իր մանկապարտէզներով, որոնք որչափ ալ իրենց բուն նպատակէն շեղած ըլլան, դարձեալ նախընտրելի են հին վարպետ տուտուի ծաղկոցներէն: Կալանթարեանէն և Իփէքճեանէն ետքը, միակ գործնական քայլը առնողը եղաւ: Բաւական թուով մանկապարտիզպանուհիներ հասցուցած է, որոնք այսօր զանազան տեղեր իր պաշտօնավարին թէ երկրին և թէ արտասահմանի մէջ: Վերջերս նաեւ կը պարապէր հիւանդապահ կիներ պատրաստելու գործով և մեծ նուէրներ հաւաքած էր Բերայի աղքատախնամին համար:

Տիկին Մատակեան կը թողու միակ մանչ զաւակ մը:

Կարծես ուրս կառավարութեան ճնշումները չէին բաւեր, մէյ մըն ալ աս կաթողիկոսարանին հասցկատակները կողման նոր վիշտ մը աւելցնել հայուն պըլ-

խին, և պատճառ դառնալ կաթողիկոսարանին ամենէն ընթացիկ գործերուն գաղափարն: Կարգ մը կաթողիկոսական պաշտօնեաներ, օգտուելով կաթողիկոսին իրը թէ զբաղած վիճակէն, առանց իր ճամբանքի սկսած են շորթել էլ միամտի հասոյթները: Երկուսն որ, այսօր «կոպէկ» չէ մնացեր գաղտնաբանին մէջ: Այս վիճակին վերջ մը տալու համար, փոխանակ այդ պնակալէզ գողերը հեռացնելու, կը խորհուի եղեր ճեմարանին ուսուցիչներուն ամսականները կարճեցնել, գասարանները միացնել և տարկաները կրճատել: Մինակ ասիկա պակաս էր օճախնիս հիմնադրուած քանդուելու համար:

— Հայրենիքէն կը քաղենք հեռուաւոր:

Երկու օր առաջ Բաղէշէն քաղաքս ժամանած արժանահատ ճամբորդէ մը կը տեղեկանանք թէ՛ հոչակաբար յեղափոխական Սերոբ փաշայի կինը, Սօսի, ազատ արձակուած է բանտէն և հիմա կը գտնուի իր գիւղը՝ Սոխորդ:

Մեր ընթերցողներուն յայտնի է արդէն որ Սօսի քաղաքը կը ռուսացաւ իր սմունոնոյն քովիկը, անոր ինչալէն ետք, անոր հրացանովը և վիրաւորուելով գետին ինկաւ թիւրքերուն ձեռքը, 1899 նոյեմբեր ամսուն մէջ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Պոլսոյ մէջ հայերու ձեռքակալութիւնը և արտորը շատնալուն պատճառով, Օրմանեան խիստ դիմումներ րրած է Երլաղ ոտակալութեան դէմ և յայտարարած է որ եթէ այդպէս շարունակուի ինք ստիպուած պիտի ըլլայ իր հրաժարականը տալ:

— Յայտնի մասնութիւններէն վերջ Սուլթանը սկսած է կասկածիլ ժէօն թուրքերու գոյութեան վրայ: Հալէպի նախկին կառավարիչ Ռաուֆ փաշայի կարծիքը հարցուցած է, որ երբեմն Սուլթանի աչքէն ինչալով պաշտօնանկ եղած էր և վերջը յիտս կոչուած է ու: Հիմա Սուլթանին շնորհը կը վայելէ: Ռաուֆ փաշան ալ կը կարծէ թէ ժէօն թիւրք չիկայ, և Սուլթանը անոր յանձնարարած է պատրաստել տեղեկագիր մը այս իմաստով թէ իրապէս ժէօն թիւրք չիկայ, այլ աւելի ճիշդը կայ խումբ մը որոնց աւելի կը պատշաճի «գժգոհ» անունը տալ, որպիսիք կը գտնուին նաև ամէն երկրներու մէջ: Ու փորձուած է թէ ամէն անգամ որ զանոնք գոհացնեն պատուով կամ պաշտօնով, անոնք կը դառնան իրենց վեհապետին և կառավարութեան ա-

մենախոնարհ ծառաները: Եթէ իսկապէս Սուլթանը արամադիր պիտի ըլլայ այլեւա չի հալածել ժէօն թիւրք յորջորջուածները, որոնք բացարձակապէս անընդունակ են կոսակցութիւն մը հիմնել, կը նշանակէ թէ անոնցմէ վարձալու բան մը չիկայ:

Ռաուֆ փաշայի վայելած շնորհը և Սուլթանի այս յանձնարարութիւնը յուզեց պաշտօնականները: որոնք կը շահագործէին այն վախը, զոր ժէօն թիւրքերը կազդէին Սուլթանին:

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Պէրլինի «Վօլֆ» գործակալութիւնը կը հաղորդէ թէ Ռեպտ. 25ին Բէքրինի մէջ եղած դեսպանախորհուրդը զբաղուեր է Գերմանիոյ նօթայի մէջ եղած կարեւոր կէտերով:

Գերմանները նկատած են որ Չինաստանի կայսեր ներկայացուցած խոստարաններու ցուցակին մէջ կը պակասի երկու գլխաւոր յանցանքներու անունները: Նոյնպէս նկատած են որ կայսեր առաջարկած պատիճները շատ մեղմ են և յայտարարած են որ դատաւճիռները պիտի գործադրուին դեսպանատուններու ներկայացուցիչներուն ներկայութեանը:

— Սեպտ. 26ին Բէքրինէն կը հեռագրեն թէ միջազգային զօրաց հրամանատարները համաձայնութեան եկած են քաղաքային ոստիկանութիւնը կազմակերպելու ինչորոշ մէջ: Յայտարարութիւնով մը բնակիչներուն պիտի արձուցնուի քաղաք մտնել կամ դուրս ելլել առանց մասնաւոր հրաման խնդրելու:

Չինական մարտան գլխաւոր կառավարիչ Սըր-Պորտ յայտարարութիւն մը կը պատրաստէ գիւղացիներուն առաջարկելով որ ուսեստի պաշար իրեն Բէքրին և կը խոստանայ երաշխաւորել իշխանութեան հովանաւորութիւնը:

— «Պրանք. Փօր. կազէթ» իմացած է Նանկայէն որ կայսերական հրովարտակով մը յայտարարուած է թէ անձ մը ուզեր է Գուանգ Սու կայսրը սպանել անոր Սինկան ֆու ճամբորդած միջոցին ու առանց յաջողելու բռնուեր է և մահուան դատապարտուեր:

— Ճարտն և Գերմանիա համաձայնած են ֆրանսական նօթայի հետ:

— Հօնկ-Գօնկէն Անգլիական զօրադուրդ մը զրկուած է սահմանակալութեան արդէս զի պատմաբաններուն և չին փախստական զինուորներուն արգիլեն անգլիական հողերը մտնալ:

— Վալտերըզն ճամբայ ելած է զէպի Բէքրին, և գլխաւոր զինուորական վարչութիւնը հոն պիտի հաստատէ:

— Շանկայէն կը հաղորդեն որ

երկրին ներսերը յուղումներ կը շարունակուին, կը հաստատեն թէ Իւն-Չուանի մէջ ապստամբներու թիւը քանի մը հազարներու կը հասնի, Իվան-Թունկի ապստամբութիւնը նոյնպէս զրպուած չէ:

Թ Ր Ա Ն Ա Վ Ա Լ

Լօրտ Ռօպէրթս սեպտ. 29ին կը հեռագրէ Երեզուրայէն որ անցեալ երեքշաբթի ճակատամարտ մը տեղի ունեցած է Գրիւկէր Ստրօպի քով Անգլիացուց և Պօէրնեբու միջեւ: Վերջինները բաւական սպաննուած և վիրաւորեալներ թողուցած են պատերազմի դաշտին մէջ:

— Քապէն կը հեռագրեն թէ ժէնէրալ Պիլլէր ճամբա ելած է զէպի Անգլիա:

— Պիթուլիէն կը հաղորդեն թէ Պօէրնեբու սեպտ. 27ին 12 անգլիացի ձերբակալեր են անգլիական յառաջապահ զօրքէն և խորտակեր են 600 մէթր Պիթուլի երկաթուղին գծէն:

ՏՕՔԹ Ա. ԹՎԱՄԱԶԵՆ

Պատիւ ունի ծանուցանել յարգոյ հասարակութեան թէ՛ իր հիւանդութենէն ապաքինած ըլլալով, այսուհետեւ հիւանդ պիտի ընդունի Չար-Պօրիս Պօրաճիէֆին դեղարանին քովը թիւ 37 սուրը:

Գր դարմանէ մասնաւորապէս գաղական արտի և միզանցքաբորբոքման, նաեւ ամէն տեսակ հիւանդութիւններ, առաւանները ժամը 9—12, կէս օրէն վերջը 2—5:

ՉՈՒԱՐԱՆ «ԿՈՒԹԷՆՊԵՐԿ» (Տպագրական տառերու)

Կարճր Անտաղ . Ուղիղ կարգ Հաւաւար բարձրորդիւն

Ամէն լիզուէ տպագրական տառեր և զանազանք՝ գոհացուցիչ զենքով:

Հասցէ՝ Fonderie typographique, Gutenberg, Sophia, Rue Graff Ignatieff № 3, 14—25

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Պատիւ ունիմ ծանուցանել յարգոյ յաճախորդներուս, որ զարգացական նոր շրջանին համար, ծանօթ հեղինակներէ, մանկավարժական ուղորդիչ նոր գրու թիւններով պատրաստուած զարգացական գրքեր թիւի տուած եմ: Մեծաքանակ զնունդու գոհացուցիչ զեղծ Ու և է յանձնարարութիւն անգործագրելի և անպատասխան կը մայ եթէ կանխիկ գրամով ապսպրուած չըլլայ:

Գրատանս հետ հայու ունեցողներէ կը խնդրուի որ փութան ժամ առաջ կարգադրել:

Գնում եւ վաճառում ամէն տեսակ նամակագրողներու:

Լոյս տեսաւ Գերական-Ընթերցարան պատկերազարդ նախակրթարան Ա. ասարի գրել կարգալու բնական գրութեամբ, աշխատասիրեց Միթար Պոնտաղի, գին 5 դահիլան:

Հասցէ՝ A. Zarbanelian Librairie Varna (Bulgarie)

Печатница Хр. Н. Войниковъ—Варна